

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Թովմաս Արծրունի (10-րդ դար)

Թովմասի մասին կենսագրական տեղեկություններ կը պակսին: Իր գրությունն է կ'իմանանք որ ապրած է Գրիգոր-Դերենիկ եւ ասոր որդի՝ Գագիկ Արծրունիի իշխանութեան տարիներուն, որոնց յանձնարարութեամբ գրած է տոհմին պատմութիւնը, որ կը հասցնէ մինչեւ 910-ի դէպքերը: Ինք եւս Արծրունիներու տոհմէն է, եւ հաւանօրէն՝ եկեղեցական:

Գիրքը բաժնուած է երեք դպրութիւններու: Առաջինին մէջ մարդկային ցեղաբանութիւնը տալէ ետք, Արծրունիներու ծագումը կը սերէ Սենեքերիմ Ասորի տիրակալին Ադրամելէք եւ Սանասար որդիներէն, եւ կը հասնի մինչեւ 428 թուականը՝ յետ Քրիստոսի, տալով Արծրունի ծանօթ անձերու պատմութիւնը:

Երկրորդ դպրութեան մէջ կ'ամփոփէ 450–850 տարիները, շատ քիչ Արծրունի իշխաններու մասին խօսելով: Իսկ Երրորդ դպրութիւնը կը պարունակէ 850–910 տարիները, որ հեղինակին մերձաւոր ժամանակն է: Այս դպրութեան մէջ կը պատմէ մանրամասնօրէն Գրիգոր-Դերենիկի եւ ապա անոր որդիին՝ Գագիկի գործերը:

Ձեռագիրներուն մէջ՝ պատմութիւնը կը շարունակուի մինչեւ 930 տարին. այս մասին մէջ մանրամասնօրէն եւ գեղեցիկ նկարագրութիւնը կայ Ոստանի եւ Աղթամարի մէջ կատարուած շինարարութիւններուն: Այս մասին ոճը եւ լեզուն կը տարբերին բուն պատմութեան գիրքէն եւ Թովմասէ տարբեր մէկը պէտք է ըլլայ հեղինակը: Այս երկու մասերուն կայ ազուցուած աւելի փոքր յաւելում մը՝ որ կը հասցնէ պատմութիւնը մինչեւ 13-րդ դար պատահած դէպքեր:

Թովմաս հասկցած է իր ձեռնարկած գործին դժուարութիւնները, եւ իր կարողութիւններուն չափաւոր ըլլալը: Դիմած է աղբիւրներու՝ համադրելով Մովսէս Խորենացիին տուած տեղեկութիւնները, ինչպէս նաեւ՝ Եղիշէին Աբրահամ Խոստովանողին, Մամբրէ Վերծանողի եւ եղբօր Մովսէսի, եւ Թէոդորոս Քերթողի գործերը: Այցելած է Արծրունիներուն գաւառները, հետազօտած է եւ պրպտած տեղեկութիւնները: Սակայն, չէ յաջողած հաւաքած ատաղձը ներկայացնել միաւորուած, յստակ, ճշգրիտ, եւ ամբողջական: Ջատագով ըլլալով Արծրունիներու տոհմին, անտեսած է Բագրատունիներուն դերը: Չէ ըմբռնած դէպքերուն եւ իրերամարտ կոիւններուն բուն պատճառները:

Այս թերութիւնները կ'արտայայտուին իր շարադրութեան մէջ եւս: Գաղափարները պարզ եւ որոշ չեն ըմբռնուիր, եւ ստէպ կը շեղի խորհրդածութիւններու մէջ, որ կը կասեցնեն դէպքերուն ընթացքը, բացի ըլլալէ խրթին ու մութ իրենց մէջ: Կը յաջողի պատերազմներուն արտաքին ներկայացումին մէջ, բայց ամուլ եւ ունայն կը յայտնուի զգացումներն ու յուզումները մեզի փոխանցած ատեն:

Ընդհակառակն՝ առաջին յաւելումին հեղինակը կը յայտնուի կեանքով լեցուն եւ աշխոյժ գրիչ մը. առատախօս, ճարտասան, նկարչագեղ եւ շարժուն ոճով կը ներկայացնէ Աղթամարի շինութեան նուիրուած էջերը. Գագիկ իշխանին դիմանկարը ուրուագրող տողերը առանձին հրապոյր մը կը ցոլացնեն:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

